



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» հունվարի 2023 թվականի N 68-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԹՎՈՎ ՄԵԿ ՀՈՂԱԿՏՈՐԻ
ԱՃՈՒՐԴԸ ԶԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԱՃՈՒՐԴԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 464-րդ հոդվածի, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով 2023 թվականի հունվարի 26-ին Ջրվեժի համայնքապետարանում կայացած համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային հանձնաժողովի NN 1/11-1/12 արձանագրությունները և հաշվի առնելով այն, որ անհրաժեշտություն է առաջացել 2023 թվականի հունվարի 26-ին կայացած աճուրդում չվաճառված թվով մեկ հողակտորի (լոտի) վերաբերյալ ինժեներական ենթակառուցվածքների առկայության և դրանց հետագա ապահովման լրացուցիչ ուսումնասիրման, **որոշում եմ.**

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից 2023 թվականի հունվարի 26-ին կայացած աճուրդում չվաճառված 07-042-0344-0002 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողակտորի աճուրդը համարել չկայացած և հրաժարվել այն երկրորդ աճուրդի ներկայացնելուց:

2. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 26
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» հունվարի 2023 թվականի N 67-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հոդային օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով 2023 թվականի հունվարի 26-ին Զրվեժի համայնքապետարանում կայացած համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային հանձնաժողովի NN 1/1-12 արձանագրությունները, **որոշում եմ.**

1. Հաստատել համայնքային սեփականություն հանդիսացող հողերի 2023 թվականի հունվարի 26-ին կայացած աճուրդի արդյունքները և աճուրդային վաճառքի հաղթողին տրամադրել հողամաս, համաձայն NN 1-10 հավելվածների:

2. Հանձնարարել աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանին՝ սահմանված ժամկետում ապահովել սույն որոշմամբ աճուրդում հաղթող (գնորդ) ճանաչված անձանց կողմից վճարման ենթակա գումարների մուծումը (փոխանցումը) Զրվեժ համայնքի բյուջեի համապատասխան հաշվին:

3. Հանձնարարել համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Նորայր Սանթրոսյանին՝ աճուրդով գնված հողամասերի վճարման ենթակա գումարների (սահմանված ժամկետում ու կարգով) վճարումը կատարելուց հետո, աճուրդում հաղթողներին ապահովել հողամասի հատակագծով, նշահարման ակտով և կնքել հողամասերի օտարման պայմանագրեր:

4. Ընդունել ի գիտություն, որ հողամասի օտարման պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման՝ անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7. Սույն որոշման ուժի մեջ է մտնում՝ ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 26
գ. Զրվեժ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ
ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻ (ԳՆՈՐԴԻ)

1. Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, (իրավաբանական անձի անվանումը), հասցեն՝
Իսահակ Գասպարի Ավագյան, անձնագիր AU 0365237, տրված 057-ի կողմից 22.07.2021 թվականին,
բնակվող՝ Արմավիրի մարզ, գյուղ Մեծամոր, Չարենցի փողոց, թիվ 20 տուն:

2. Գնորդը մուծել է՝

1) 900105228119 հ/հ՝ մասնակցության վճար 10 000 դրամ, անդորրագիր N 70114991:

2) 900105221171 հ/հ՝ նախավճար 3 000 000 դրամ, անդորրագիր N 000138, մուծված 24.01.2023 թվականին:

3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝

Գյուղատնտեսական գործունեության համար, համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր:

4. Վաճառվող հողամասի ծածկագիրը, լոտի համարը, մակերեսը, մեկնարկային գինը՝

07-042-0300-0093; 1; 1,5 հեկտար; 6 000 000 դրամ:

5. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն (վաճառքի) գինը՝ 6 000 000 դրամ:

6. Ենթակա է վճարման (հաշվի առնելով մուծված նախավճարը)՝ 3 000 000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ
ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻ (ԳՆՈՐԴԻ)

1. Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, (իրավաբանական անձի անվանումը), հասցեն՝

Արամ Ռոբերտի Ավագյան, նույնականացման քարտ 008709743, տրված 004-ի կողմից 21.06.2016

թվականին, բնակվող՝ քաղաք Երևան, Աղբյուր Սերոբի փողոց, 2ա շենք, բնակարան 20:

2. Գնորդը մուծել է՝

1) 900105228119 հ/հ՝ մասնակցության վճար 10 000 դրամ, անդորրագիր N 70217641:

2) 900105221171 հ/հ՝ նախավճար 7 000 000 դրամ, անդորրագիր N 356, մուծված 24.01.2023 թվականին:

3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝

Գյուղատնտեսական գործունեության համար, համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր:

4. Վաճառվող հողամասի ծածկագիրը, լոտի համարը, մակերեսը, մեկնարկային գինը՝

07-042-0317-0045; 2; 3,57281 հեկտար; 14 000 000 դրամ:

5. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն (վաճառքի) գինը՝ 26 600 000 դրամ:

6. Ենթակա է վճարման (հաշվի առնելով մուծված նախավճարը)՝ 19 600 000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ
ԿԱՅԱՅԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻ (ԳՆՈՐԴԻ)

1. Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, (իրավաբանական անձի անվանումը), հասցեն՝
Արման Սամվելի Մարտիրոսյան, նույնականացման քարտ 001936954, տրված 004-ի կողմից 08.04.2015
թվականին, բնակվող՝ քաղաք Երևան, Ավետ Ավետիսյան, 63-րդ շենք, բնակարան 13:

2. Գնորդը մուծել է՝

1) 900105228119 հ/հ՝ մասնակցության վճար 10 000 դրամ, անդորրագիր N 001805:

2) 900105221171 հ/հ՝ նախավճար 4 000 000 դրամ, անդորրագիր N 001871, մուծված 25.01.2023 թվականին:

3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝

Գյուղատնտեսական գործունեության համար, համայնք Զրվեժ, գյուղ Ձորաղբյուր:

4. Վաճառվող հողամասի ծածկագիրը, լոտի համարը, մակերեսը, մեկնարկային գինը՝

07-042-0325-0040; 3; 2,09992 հեկտար; 8 000 000 դրամ:

5. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն (վաճառքի) գինը՝ 27 200 000 դրամ:

6. Ենթակա է վճարման (հաշվի առնելով մուծված նախավճարը)՝ 23 200 000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ
ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻ (ԳՆՈՐԴԻ)

1. Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, (իրավաբանական անձի անվանումը), հասցեն՝
Գագիկ Սոսի Շահգեղյան, անձնագիր AV 0287546, տրված 001-ի կողմից 28.06.2022 թվականին, բնակվող՝
քաղաք Երևան, Լվովյան փողոց, 14/1 շենք, բնակարան 37:
2. Գնորդը մուծել է՝
 - 1) 900105228119 հ/հ՝ մասնակցության վճար 10 000 դրամ, անդորրագիր N 70118636:
 - 2) 900105221171 հ/հ՝ նախավճար 3 000 000 դրամ, անդորրագիր N 001092, մուծված 26.01.2023 թվականին:
3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝
Գյուղատնտեսական գործունեության համար, համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր:
4. Վաճառվող հողամասի ծածկագիրը, լոտի համարը, մակերեսը, մեկնարկային գինը՝
07-042-0317-0330; 4; 1,0 հեկտար; 6 000 000 դրամ:
5. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն (վաճառքի) գինը՝ 6 000 000 դրամ:
6. Ենթակա է վճարման (հաշվի առնելով մուծված նախավճարը)՝ 3 000 000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ
ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻ (ԳՆՈՐԴԻ)

1. Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, (իրավաբանական անձի անվանումը), հասցեն՝
Նվարդ Էդուարդի Խաչատրյան, անձնագիր AV 0414110, տրված 005-ի կողմից 07.09.2022 թվականին,
բնակվող՝ քաղաք Երևան, Գյուլիքեվիյան փողոց, 21 շենք, բնակարան 28:
2. Գնորդը մոծել է՝
 - 1) 900105228119 հ/հ՝ մասնակցության վճար 10 000 դրամ, անդորրագիր N 70118425:
 - 2) 900105221171 հ/հ՝ նախավճար 500 000 դրամ, անդորրագիր N 001893, մոծված 26.01.2023 թվականին:
3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝
Գյուղատնտեսական գործունեության համար, համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր:
4. Վաճառվող հողամասի ծածկագիրը, լոտի համարը, մակերեսը, մեկնարկային գինը՝
07-042-0004-0042; 5; 1254,5 քառ.մետր; 1 000 000 դրամ:
5. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն (վաճառքի) գինը՝ 1 000 000 դրամ:
6. Ենթակա է վճարման (հաշվի առնելով մոծված նախավճարը)՝ 500 000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ
ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻ (ԳՆՈՐԴԻ)

1. Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, (իրավաբանական անձի անվանումը), հասցեն՝
Նվարդ Էդուարդի Խաչատրյան, անձնագիր AV 0414110, տրված 005-ի կողմից 07.09.2022 թվականին,
բնակվող՝ քաղաք Երևան, Գյուլիքեվիյան փողոց, 21 շենք, բնակարան 28:

2. Գնորդը մուծել է՝

1) 900105228119 հ/հ՝ մասնակցության վճար 10 000 դրամ, անդորրագիր N 70118425:

2) 900105221171 հ/հ՝ նախավճար 450 000 դրամ, անդորրագիր N 001892, մուծված 26.01.2023 թվականին:

3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝

Գյուղատնտեսական գործունեության համար, համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր:

4. Վաճառվող հողամասի ծածկագիրը, լոտի համարը, մակերեսը, մեկնարկային գինը՝

07-042-0004-0041; 6; 1109,2 քառ.մետր; 900 000 դրամ:

5. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն (վաճառքի) գինը՝ 900 000 դրամ:

6. Ենթակա է վճարման (հաշվի առնելով մուծված նախավճարը)՝ 450 000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ
ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻ (ԳՆՈՐԴԻ)

1. Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, (իրավաբանական անձի անվանումը), հասցեն՝
Նվարդ Էդուարդի Խաչատրյան, անձնագիր AV 0414110, տրված 005-ի կողմից 07.09.2022 թվականին,
բնակվող՝ քաղաք Երևան, Գյուլիքեվիյան փողոց, 21 շենք, բնակարան 28:

2. Գնորդը մուծել է՝

1) 900105228119 հ/հ՝ մասնակցության վճար 10 000 դրամ, անդորրագիր N 70118425:

2) 900105221171 հ/հ՝ նախավճար 5 250 000 դրամ, անդորրագիր N 001891, մուծված 26.01.2023 թվականին:

3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝

Գյուղատնտեսական գործունեության համար, համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր:

4. Վաճառվող հողամասի ծածկագիրը, լոտի համարը, մակերեսը, մեկնարկային գինը՝

07-042-0460-0009; 8; 2,61061 հեկտար; 10 500 000 դրամ:

5. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն (վաճառքի) գինը՝ 10 500 000 դրամ:

6. Ենթակա է վճարման (հաշվի առնելով մուծված նախավճարը)՝ 5 250 000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ
ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻ (ԳՆՈՐԴԻ)

1. Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, (իրավաբանական անձի անվանումը), հասցեն՝
Հուսիկ Յուլիկ Միլիտոսյան, անձնագիր AU 0507785, տրված 001-ի կողմից 08.12.2021 թվականին,
բնակվող՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջուլք, 2-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 4 տուն:

2. Գնորդը մուծել է՝

1) 900105228119 հ/հ՝ մասնակցության վճար 10 000 դրամ, անդորրագիր N 69180050:

2) 900105214176 հ/հ՝ նախավճար 5 000 000 դրամ, անդորրագիր N 000134, մուծված 23.01.2023 թվականին:

3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝

Գյուղատնտեսական գործունեության համար, համայնք Ջրվեժ, գյուղ Ջուլք:

4. Վաճառվող հողամասի ծածկագիրը, լոտի համարը, մակերեսը, մեկնարկային գինը՝

07-030-0111-0165; 9; 1,41985 հեկտար; 10 000 000 դրամ:

5. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն (վաճառքի) գինը՝ 10 000 000 դրամ:

6. Ենթակա է վճարման (հաշվի առնելով մուծված նախավճարը)՝ 5 000 000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ
ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻ (ԳՆՈՐԴԻ)

1. Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, (իրավաբանական անձի անվանումը), հասցեն՝
Ռոման Ատոմի Մովսիսյան, նույնականացման քարտ 006329387, տրված 059-ի կողմից 23.08.2017
թվականին, բնակվող՝ համայնք Ջրվեժ, գյուղ Զովք, 6-րդ փողոց, թիվ 14 տուն:

2. Գնորդը մուծել է՝

1) 900105228119 հ/հ՝ մասնակցության վճար 10 000 դրամ, անդորրագիր N 001803:

2) 900105214176 հ/հ՝ նախավճար 925 000 դրամ, անդորրագիր N 000134, մուծված 23.01.2023 թվականին:

3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝

բնակելի կառուցապատման համար, համայնք Ջրվեժ, գյուղ Զովք, 17-րդ փողոց, թիվ 7:

4. Վաճառվող հողամասի ծածկագիրը, լոտի համարը, մակերեսը, մեկնարկային գինը՝

07-030-0111-0115; 10; 750,0 քառ.մ; 1 850 000 դրամ:

5. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն (վաճառքի) գինը՝ 5 272 500 դրամ:

6. Ենթակա է վճարման (հաշվի առնելով մուծված նախավճարը)՝ 4 347 500 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ
ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻ (ԳՆՈՐԴԻ)

1. Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, (իրավաբանական անձի անվանումը), հասցեն՝
Տիգրան Ֆելիքսի Գևորգյան, անձնագիր AU 0341720, տրված 019-ի կողմից 06.07.2021 թվականին,
բնակվող՝ համայնք Ջրվեժ, գյուղ Զովք, 1-ին փողոց, 1-ին փակուղի, թիվ 2 տուն:

2. Գնորդը մուծել է՝

1) 900105228119 հ/հ՝ մասնակցության վճար 10 000 դրամ, անդորրագիր N 69129022:

2) 900105214176 հ/հ՝ նախավճար 1 250 000 դրամ, անդորրագիր N 000275, մուծված 04.01.2023 թվականին:

3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝

բնակելի կառուցապատման համար, համայնք Ջրվեժ, գյուղ Զովք, 22-րդ փողոց, թիվ 126:

4. Վաճառվող հողամասի ծածկագիրը, լոտի համարը, մակերեսը, մեկնարկային գինը՝

07-030-0111-0026; 11; 1000,0 քառ.մ; 2 500 000 դրամ:

5. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն (վաճառքի) գինը՝ 7 500 000 դրամ:

6. Ենթակա է վճարման (հաշվի առնելով մուծված նախավճարը)՝ 6 250 000 դրամ:

ՋՐՎԵՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ, ԶՀԱՂԹԱԾ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՋՐՎԵՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՆ ՄՈՒԾՎԱԾ ՆԱԽԱՎԱՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ

1. Սմբատ Պավլիկի Խաչատրյան, անձնագիր AV 0386340, տրված 051-ի կողմից 19.08.2022 թվականին, բնակվող՝ քաղաք Երևան, Ավան, Թումանյան թաղամաս, 6/2 շենք, բնակարան 5:
1 250 000 դրամ՝ անդորրագիր N 000175, մուծված 25.01.2023 թվականին:
2. Ալբերտ Արթուրի Գևորգյան, նույնականացման քարտ 002509719, տրված 005-ի կողմից 07.05.2014 թվականին, բնակվող՝ համայնք Ջրվեժ, գյուղ Զովք, 4-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 2 տուն:
925 000 դրամ՝ անդորրագիր N 000009, մուծված 04.01.2023 թվականին:
3. Գևորգ Գրիգորի Նիկողոսյան, նույնականացման քարտ 011520673, տրված 005-ի կողմից 12.02.2021 թվականին, բնակվող՝ քաղաք Երևան, Նոր Նորք, Մուրճովական փողոց, թիվ 51/28 տուն:
7 000 000 դրամ՝ անդորրագիր N 000794, մուծված 26.01.2023 թվականին,
4. Վազգեն Հրաչյայի Ղուկասյան, նույնականացման քարտ 010598159, տրված 007-ի կողմից 17.09.2018 թվականին, բնակվող՝ քաղաք Երևան, Շիրակի փողոց, 66-րդ շենք, բնակարան 12:
925 000 դրամ՝ անդորրագիր N 000164, մուծված 20.01.2023 թվականին:
5. Ստեփան Գեղամի Ալոյան, անձնագիր AU 0392873, տրված 005-ի կողմից 15.10.2020 թվականին, բնակվող՝ քաղաք Երևան, Բանավան, 16-րդ շենք, բնակարան 23:
1 250 000 դրամ՝ անդորրագիր N 000320, մուծված 20.01.2023 թվականին:
6. Դավիթ Վազգենի Աբգարյան, նույնականացման քարտ 012818993, տրված 007-ի կողմից 25.06.2020 թվականին, բնակվող՝ քաղաք Երևան, Գոգոլի փողոց, 3-րդ շենք, բնակարան 5:
7 000 000 դրամ՝ անդորրագիր NN 001851, 001070, մուծված 25.01.2023 թվականին:
7. Մարտին Զավենի Գրիգորյան, նույնականացման քարտ 000197962, տրված 004-ի կողմից 19.11.2012 թվականին, բնակվող՝ քաղաք Երևան, Համո Սահյան փողոց, տուն 94:
1 250 000 դրամ՝ անդորրագիր N 001020, մուծված 23.01.2023 թվականին:
8. Զավեն Հենրիկի Իգիթխանյան, նույնականացման քարտ 011489184, տրված 001-ի կողմից 21.07.2021 թվականին, բնակվող՝ Լոռու մարզ, գյուղ Շիրակամուտ, Արցախի փողոց, տուն 54:
4 000 000 դրամ՝ անդորրագիր N 000076, մուծված 26.01.2023 թվականին:
9. Լևոն Սերժիկի Գաբրիելյան, նույնականացման քարտ 002594513, տրված 005-ի կողմից 07.05.2015 թվականին, բնակվող՝ քաղաք Երևան, Բանավան, 12-րդ շենք, բնակարան 8:
7 000 000 դրամ՝ անդորրագիր N 000138, մուծված 26.01.2023 թվականին:
10. Արման Սամվելի Մարտիրոսյան, նույնականացման քարտ 001936954, տրված 004-ի կողմից 08.04.2015 թվականին, բնակվող՝ քաղաք Երևան, Ավետ Ավետիսյան փողոց, 63 շենք, բնակարան 13:
925 000 դրամ՝ անդորրագիր N 001873, մուծված 25.01.2023 թվականին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» հունվարի 2023 թվականի N 66-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի ԹԻՎ 1109-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 37-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մանկապարտեզի շահագործման ընթացքում արձանագրվել են որոշակի թերություններ, **որոշում եմ.**

Ուժը կորցրած ճանաչել Ջրվեժ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 4-ի «Ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 1109-Ա որոշումը:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 25
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» հունվարի 2023 թվականի N 65-Ա

ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 108-րդ կետով, **որոշում եմ.**

1.Թույլատրել Մայրանուշ Հարությունի Փաշայանին և Կարո Կարենի Ռեզյանին՝ շարունակելու ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի թիվ 2 հասցեի հողամասում 2022 թվականի օգոստոսի 11-ի թիվ 221 շինարարության թույլտվությամբ տրված կցաշարային բնակելի տների կառուցման շինարարական աշխատանքները՝ համաձայն փոփոխված նախագծի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Մայրանուշ Հարությունի Փաշայանին և Կարո Կարենի Ռեզյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՌՈՐԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 25
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» հունվարի 2023 թվականի N 64-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ.**

1.«ՄԻԴԻՍ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ին՝ տնօրեն Միեր Վարդանի Սաֆարյան, տալ երկհարկանի բլոկացված բնակելի տների կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի 3-րդ նրբանցքի թիվ 13-15 հասցեի հողամասում:

2.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

3.Պարտավորեցնել «ՄԻԴԻՍ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի տնօրեն Միեր Վարդանի Սաֆարյանին, շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ «ՄԻԴԻՍ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի տնօրեն Միեր Վարդանի Սաֆարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 25
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» հունվարի 2023 թվականի N 63-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, **որոշում եմ.**

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Ռուբեն Թադևոսյանին՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 46 հասցեում 2023 թվականին զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքով:

2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ տնտեսվարող սուբյեկտին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ՌՈՒԲԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 25
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» հունվարի 2023 թվականի N 62-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջով, **որոշում եմ՝**

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Հարություն Բարսեղյանին՝ 2023 թվականին Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի Այգեգործական 1-ին թաղամասի թիվ 42-43 հասցեում տեղադրելու արտաքին գովազդ՝ 1,44 քառ.մետր մակերեսով:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հարություն Բարսեղյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԴՈՒՐԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 25
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» հունվարի 2023 թվականի N 61-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ և 8-րդ կետերի պահանջներով, **որոշում եմ.**

1.Թույլատրել «Մուլտի Լեոն» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Աղասի Մարգարյան, 2023 թվականին զբաղվելու սեղմված բնական գազի վաճառքով Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի Երևան-Գառնի մայրուղու թիվ 2 հասցեում, ինչպես նաև թույլատրել նշված հասցեում ժամը 24:00-ից հետո զբաղվելու առևտրի կազմակերպմամբ:

2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում տնտեսվարող սուբյեկտին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 25
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» հունվարի 2023 թվականի N 60-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացիներ Միհրան Կառլենի Եղիազարյանի (ծնված՝ 1962 թվականի հունիսի 4-ին), Գոռ Գազիկի Եղիազարյանի (ծնված՝ 1996 թվականի դեկտեմբերի 17-ին) և Արմինե Ֆեդյայի Եղիազարյանի (ծնված՝ 1975 թվականի սեպտեմբերի 21-ին) Զրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 5-րդ փողոցի թիվ 68 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր, վավերացված 2022 թվականի սեպտեմբերի 22-ին, «ԳԵՈԿԱՂ 55» ՍՊԸ-ի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 23-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2022JGUXYP, մուտքագրված 2022 թվականի դեկտեմբերի 27-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԵՈԿԱՂ 55» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Միհրան, Գոռ և Արմինե Եղիազարյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 5-րդ փողոցի թիվ 68 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում 1973 թվականին ինքնակամ կառուցել է թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 461,24 քառ.մետր, թիվ 2 հավանոցը՝ 9,46 քառ.մետր և թիվ 3 պարիսպը՝ 2,98 քառ.մետր արտաքին մակերեսներով (կառուցման տարեթվերի վերաբերյալ համայնքապետարանում տվյալները բացակայում են, որի համար հիմք են հանդիսացել քաղաքացիներ Միհրան, Գոռ և Արմինե Եղիազարյանների դիմումում նշված և «ԳԵՈԿԱՂ 55» ՍՊԸ-ի կողմից չափագրված և հաստատված հողամասի հատակագծում նշված տարեթվերը):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Միհրան, Գոռ և Արմինե Եղիազարյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 5-րդ փողոցի թիվ 68 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինքնակամ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Միհրան, Գոռ և Արմինե Եղիազարյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 5-րդ փողոցի թիվ 68 բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 461,24 քառ.մետր, թիվ 2 հավանոցը՝ 9,46 քառ.մետր և թիվ 3 պարիսպը՝ 2,98 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրուկանյանի վրա:

3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Բաղդոսյանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Միհրան, Գոռ և Արմինե Եղիազարյանների որոշման ընդունման մասին երազմեցելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2023 թ. հունվարի 25

գ. Զրվեժ

ՌՈՐԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» հունվարի 2023 թվականի N 59-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացիներ Նվերիկ Հրանտի Դավթյանի (ծնված՝ 1963 թվականի մարտի 4-ին), Լաուրա Շահենի Սահակյանի (ծնված՝ 1966 թվականի օգոստոսի 26-ին), Հրանտ Նվերիկի Դավթյանի (ծնված՝ 1985 թվականի հունվարի 14-ին), Հրաչյա Նվերիկի Դավթյանի (ծնված՝ 1988 թվականի օգոստոսի 29-ին) և Լիանա Նվերիկի Դավթյանի (ծնված՝ 1986 թվականի մարտի 8-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին փողոցի թիվ 19/2 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2313928 վկայական, տրված 2007 թվականի հունիսի 25-ին, պետական վկայական ծննդի մասին թիվ ԲԱ656078, տրված 2023 թվականի հունվարի 9-ին, «ՆԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից 2022 թվականի օգոստոսի 26-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2022QSVRPD, մուտքագրված 2022 թվականի օգոստոսի 30-ին):

